

Luys Lnyu®




ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆ

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային,
2018-2019թթ., %**




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019թ. փետրվարին աճել է՝ հունվար-փետրվար ամիսներին կազմելով 6.5 տոկոս, որը, սակայն, 3.6 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Ընթացիկ տարվա հունվար ամսվա տնտեսական ակտիվության ցուցանիշը վերանայվել է դեպի ներքև, և 6.1 տոկոսի փոխարեն կազմել է 5.5 տոկոս:

Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը (8.1 տոկոսային կետով): Աճին նպաստել են նաև առևտրի (1.6 տոկոսային կետ) և շինարարության (1.6 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը:


Գծապատկեր 2-ում գյուղատնտեսության նպաստումը ՏԱՑ-ին ներկայացված է մնացորդային տեսքով և կազմում է մոտ -5.2 տոկոսային կետ: Հարկ է նշել, որ բացի գյուղատնտեսությունից, այս -5.2 տոկոսի մեջ ներառված է նաև հաշվարկային շեղումը: Գյուղատնտեսության հստակ նպաստումը հնարավոր կլինի հաշվարկել եռամսյակային պարբերականությամբ:

Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-փետրվար, %



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




2019 թվականի հունվար-փետրվար ամիսներին արդյունաբերության թողարկման ինդեքսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 1.9

տոկոսով: 2018թ. նույն ցուցանիշը կազմել էր 8.3 տոկոս: Հունվար ամսվա արդյունաբերության թողարկման ինդեքսի աճի ցուցանիշը վերանայվել է դեպի ներքև և -0.4 տոկոսի փոխարեն կազմել է -1.1 տոկոս:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




Շինարարության ծավալի աճը 2019թ. առաջին երկու ամիսներին հունվարի նկատմամբ դանդաղել է՝ կազմելով 21.6 տոկոս, ինչը 1.1 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսության կառուցվածքում նախորդ տարվա ամենաարագ աճող ճյուղը՝ ծառայությունները, 2019թ. առաջին երկու ամիսներին 2018թ. հունվար-փետրվարի նկատմամբ աճել է 17.5 տոկոսով, որը 2.4 տոկոսային կետով ավելի բարձր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը (15.1%):

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Աղյուսակ 1. Ծառայությունների կառուցվածքը և նպաստումները, 2019թ. հունվար¹


	2018, մլն դրամ	2019, մլն դրամ	Կշիռը, 2018թ., %	Աճ, %	Նպաստում, տոկոսային կետ
Ընդամենը	111,444.8	130,526.3	100.0	115.6	15.7
Կացության և հանրային սննդի կազմակերպում	6,335.6	8,293.3	5.7	128.9	1.6
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	23,129.1	33,796.7	20.8	144.1	9.2
Կրթություն	3,521.2	4,069.5	3.2	114.1	0.4
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	4,857.2	5,484.4	4.4	108.4	0.4
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	4,448.3	4,328.1	4.0	94.0	-0.2
Տեղեկատվություն և կապ	18,797.3	19,519.1	16.9	103.8	0.6
Տրանսպորտ	13,206.2	11,913.7	11.8	89.3	-1.3
Վարչարարական և օժանդակ գործունեություն	4,416.1	5,084.5	4.0	117.7	0.7
Մասնագիտ., գիտական և տեխ. գործունեություն	3,719.7	3,961.7	3.3	106.2	0.2
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	27,263.0	32,299.0	24.5	116.3	4.0
Սպասարկման այլ ծառայություններ	1,751.1	1,776.3	1.6	100.9	0.0

Ծառայությունների կառուցվածքում ամենամեծ նպաստում ունեցողը շարունակում է մնալ մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտը, որը հունվար ամսվա տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 9.2 տոկոսային կետով: Աճին նպաստել են նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության (4.0 տոկոսային կետով), կացության և հանրային սննդի կազմակերպման (1.6 տոկոսային կետով) ոլորտներում մատուցված ծառայությունների աճերը (տե՛ս Աղյուսակ 1):

¹ 2019թ. հունվար-փետրվար ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

ԱՌԵՎՏՈՒՐ


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Առևտրի շրջանառության աճի տեմպն ընթացիկ տարվա հունվար ամսին եղել է ավելի բարձր, քան նախորդ տարի, սակայն հունվար-փետրվար ամիսների կուտակային աճի տեմպը դանդաղել է՝ կազմելով 13.1 տոկոս, ինչը 4.1 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, 2018-2019թթ., %



2


* Ներկայացված են 2018 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների արտաքին առևտրի վերանայված տվյալները:

Արտահանման անկումը շարունակվել է նաև 2019 թվականի երկրորդ ամսին: Այսպես՝ հունվար-փետրվար ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանման ծավալը նվազել է 11.6 տոկոսով:

Արտահանման ծավալների նվազմանն առավելապես նպաստել է հանքահումքային արտադրանքի արտահանման 20.2 տոկոսով կրճատումը, որը ընդհանուր արտահանման անկմանը նպաստել է 7.1 տոկոսային կետով: Բացասական աճեր են ունեցել նաև ոչ թանկարժեք մետաղների, մանածագործական իրերի, թանկարժեք մետաղների ապրանքախմբերը, որոնք ընդհանուր արտահանմանը նպաստել են՝ համապատասխանաբար -5.3, -3.4 և -2.0 տոկոսային կետով: Աճ է գրանցվել միայն «պատրաստի սնունդ», «տարբեր արդյունաբերական ապրանքներ և բուսական արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալներում, որոնց դրական նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել են համապատասխանաբար 1.8, 1.5 և 0.3 տոկոսային կետ³:

ՆԵՐՄՈԾՈՒՄ

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, 2018-2019թթ., %



Ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը, նախորդ տարվա բավական բարձր աճից հետո, ընթացիկ տարվա սկզբից նվազում է: Հունվար-փետրվար ամիսներին ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 5.6 տոկոսով: Ներմուծման ծավալների անկումը հիմնականում պայմանավորված է «պատրաստի սնունդ», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ», «ոչ թանկարժեք մետաղներ», «քիմիական արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների կրճատմամբ, որոնց

³ Արտահանման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար ամսվա տվյալների հիման վրա, քանի որ հունվար-փետրվար ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

բացասական նպաստումներն ընդհանուր ներմուծմանը կազմել են համապատասխանաբար -3.7, -2.9, -1.3 և 1.0 տոկոսային կետ:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2018-2019թթ., %⁴




2019թ. հունվար-փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.9 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 2.3 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 4.9 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 5.8, 2.1 և 6.9 տոկոս:

⁴ Աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների վերանայված տվյալներով:

ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները 2018-2019թթ.,
կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**



2019 թվականի հունվար-փետրվարին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.1 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 6.8 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 15.6 տոկոսով:


ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

Բյուջեի եկամուտներ

2019 թվականի հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 32.5 տոկոսով, ընդ որում՝ հարկերը և տուրքերն աճել են 30.5 տոկոսով: Միասնական հաշվի մնացորդը կազմել է 42.3 մլրդ դրամ, որը 44.6 տոկոսով ավելի է, քան նախորդ տարվա փետրվարի վերջի մնացորդը:

Բյուջեի ծախսեր


Գծապատկեր 11. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրա բաղադրիչների նպաստումները, %



ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվար-փետրվար ամիսներին կազմել են 162.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 3.4%-ով, ինչը առավելապես (4.2 տոկոսային կետով) պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում նվազել են 45.6 տոկոսով (նպաստումը ընդհանուր ծախսերի աճին՝ -0.8 տոկոսային կետ):

Պետական բյուջեի պակասուրդ


Գծապատկեր 12. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կշիռները, %



2019թ. հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 40.6 մլրդ դրամ, որի ֆինանսավորման համար ներգրավվել է 18.6 մլրդ դրամ (պակասուրդի 45.8 տոկոսը)՝ ներքին աղբյուրներից և 22.0 մլրդ դրամ (պակասուրդի 54.2 տոկոսը)՝ արտաքին աղբյուրների հաշվին:

Պետական պարտք


Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



2019թ. փետրվարի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 6,943.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 2.4 տոկոսով: Պարտքի 92.1 տոկոսը՝ 6,393.6 մլն ԱՄՆ դոլարը, եղել է կառավարության պարտքը: Վերջինս 2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ աճել է 0.3 տոկոսով:

Գնաճը


Գծապատկեր 14. 12-ամսյա գնաճ, %



2019 թվականի փետրվարին նախորդ տարվա փետրվարի նկատմամբ սպառողական գներն աճել են 1.9 տոկոսով՝ նախորդ տարվա 3.3 տոկոսի համեմատ: Գնաճը դեռևս մնում է Կենտրոնական բանկի թիրախից ցածր:


Փողի զանգված և բազա

Գծապատկեր 15. Փողի բազայի 12-ամսյա աճը, %



2019թ. փետրվարին փողի բազայի աճի տեմպը եղել է ավելի բարձր, քան նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը: Այսպես՝ 2019թ. փետրվար ամսվա վերջի դրությամբ փողի բազան նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 14.4 տոկոսով՝ նախորդ տարվա 5.6 տոկոս աճի դիմաց:

Գծապատկեր 16. Փողի զանգվածի 12-ամսյա աճը, %




Փողի զանգվածի աճի տեմպը 2019թ. փետրվարին եղել է ավելի ցածր, քան նախորդ տարի: Ընթացիկ տարվա երկու ամիսների տվյալներով փողի զանգվածն ունի աճի միտում:

Ավանդներ և վարկեր


2019թ. փետրվարին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. փետրվարի նկատմամբ կազմել է 15.2 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ավանդների աճի տեմպին (2018թ. փետրվարի աճը՝ 8.3%):

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2019թ., %



Ավանդների աճին հիմնականում նպաստել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ 9.9 տոկոսային կետով և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 4.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության ճյուղերի, %, 2019թ. հունվար-փետրվար



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 17.7 տոկոսով (2018թ. փետրվարի աճը՝ 11.8%), ինչին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.6 տոկոսային կետով, ինչպես նաև արդյունաբերության և ծառայությունների ոլորտներին տրամադրված վարկերը՝ յուրաքանչյուրը 2.5 տոկոսային կետով:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 17.7 տոկոսով (2018թ. փետրվարի աճը՝ 11.8%), ինչին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.6 տոկոսային կետով, ինչպես նաև արդյունաբերության և ծառայությունների ոլորտներին տրամադրված վարկերը՝ յուրաքանչյուրը 2.5 տոկոսային կետով:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019թ. փետրվարին աճել է՝ հունվար-փետրվար ամիսներին կազմելով 6.5 տոկոս, որը, սակայն, 3.6 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Ընթացիկ տարվա հունվար ամսվա տնտեսական ակտիվության ցուցանիշը վերանայվել է դեպի ներքև, և 6.1 տոկոսի փոխարեն կազմել է 5.5 տոկոս: Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը (8.1 տոկոսային կետով): Աճին նպաստել են նաև առևտրի (1.6 տոկոսային

կետ) և շինարարության (1.6 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը:

2. Ծառայությունների կառուցվածքում ամենամեծ նպաստում ունեցողը շարունակում է մնալ մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտը, որը հունվար ամսվա տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 9.2 տոկոսային կետով: Աճին նպաստել են նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության (4.0 տոկոսային կետով), կացության և հանրային սննդի կազմակերպման (1.6 տոկոսային կետով) ոլորտներում մատուցված ծառայությունների աճերը:

3. Հունվար-փետրվար ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանման ծավալը նվազել է 11.6 տոկոսով: Արտահանման ծավալների նվազմանն առավելապես նպաստել է հանքահումքային արտադրանքի արտահանման 20.2 տոկոսով կրճատումը, որը ընդհանուր արտահանման անկմանը նպաստել է 7.1 տոկոսային կետով: Բացասական աճեր են ունեցել նաև ոչ թանկարժեք մետաղների, մանածագործական իրերի, թանկարժեք մետաղների ապրանքախմբերը, որոնք ընդհանուր արտահանմանը նպաստել են՝ համապատասխանաբար -5.3, -3.4 և -2.0 տոկոսային կետով: Աճ է գրանցվել միայն «պատրաստի սնունդ», «տարբեր արդյունաբերական ապրանքներ և բուսական արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալներում, որոնց դրական նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել են համապատասխանաբար 1.8, 1.5 և 0.3 տոկոսային կետ:

4. 2019 թվականի փետրվարին նախորդ տարվա փետրվարի նկատմամբ սպառողական գներն աճել են 1.9 տոկոսով՝ նախորդ տարվա 3.3 տոկոսի համեմատ: Գնաճը դեռևս մնում է Կենտրոնական բանկի թիրախից ցածր:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: